

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ
Գ.ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԴՐԱՄԱՆԵՐՈՒՄ

Հայ մեծ դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանը ապրել և ստեղծագործել է Թիֆլիս քաղաքում՝ թիֆլիսահայության մեջ:

Իր ստեղծագործություններում ականավոր թատերգուն պատկերել է հին Թիֆլիսի կյանքն ու կենցաղը՝ իր վարք ու բարքով, ծեսերով ու սովորություններով, խնջույք-պարերով և տվյալ հանրության բարբառին առաջնություն տալով՝ դարձրել այն իր ստեղծագործության լեզուն:

Գ. Սունդուկյանի բոլոր ստեղծագործությունները գրված են թիֆլիսահայ բարբառով, ինչպես տեղի հայերն էին ասում՝ «բախկի լիզվով»՝ սկսած դրամաներից ու վոդևիլներից, մինչև իսկ հողվածների, թարգմանությունների ու մասկահաթների մեջ մտցնելով այդ բարբառին բնորոշ տարրեր՝ հասցրել է այն գեղարվեստական բարձր մակարդակի:

Բայց որքան էլ Սունդուկյանը աշխատում էր հարազատ մնալ իր բարբառին, միևնույն է. նոր գրական հայերենն իր ազդեցությունն էր թողնում հեղինակի հետագա աշխատությունների վրա, և թիֆլիսահայ բարբառը գրողի գրչի տակ ենթարկվում էր լեզվական այն փոփոխություններին, որոնք նրանից առաջ չկային այդ բարբառում:

Հայերի մասին, որոնք խոսում էին Թիֆլիսի բարբառով՝ «բախկի լիզվով», հիշատակում է X դարի հայ պատմաբան եպիսկոպոս Ռեխտանես Սեբաստացին: Ըստ նրա տեղեկությունների՝ VI դ. հայերը արդեն կազմում էին Թիֆլիսի բնակչության մի մասը և սերտ հարաբերություններ ունեին Վրաստանի այլ շրջանների հետ: Իսկ հայերի և վրացիների փոխհարաբերությունների մասին Սեբաստացին գրում է հետևյալը. «Հայաստանը և Վրաստանը սահմանակից պետություններ են. նույնիսկ նշանավոր իշխանների մեծամասնությունը գնում է Վրաստանից Հայաստան և Հայաստանից՝ Վրաստան»¹:

Հայերի և վրացիների փոխհարաբերության մասին իր աշխատություններից մեկում հիշատակում է նաև վրաց գիտնական Ի. Աբուլածեն: Նա գրում է «Տառ-Կլարջեթում 10-րդ դարում գործող վրաց ղափրների համար օտար լեզուներից առաջին հերթին մատչելի էր հայերենը: Վրաց ղափրների հայերեն գրության իմացությանը մեծ չափով նպաստում էր այն հանգամանքը, որ հայրենիքում գործունեության ասպարեզը կորցնելուց հետո հետգիետե կորց-

1. А. Томсон «Историческая грамматика современного армянского языка г. Тифлиса», С-Петербург, 1890, стр. 10.

նում էին իրենց մայրենի լեզվի, առաջին հերթին՝ ժամանակի գրական լեզվի իմացությունը և ծուլվում վրացիների հետ»²:

10-րդ դ. վրացերեն ժողովածուի գրիչների հիշատակագրությունների մեջ նկատվող լեզվական երևույթները կրում են բարբառային բնույթ: Բարբառային երևույթներ նկատվում են նաև Միքայել Մոդրեկիլու երգարանի մեջ տեղ գտած հայերեն հիշատակագրություններում: «Քանի որ այդ հիշատակագրությունները գրվել են Տառ-Կլարջեթում, հետևաբար դրանց մեջ նկատվող բարբառային երևույթները կարելի է ընդունել 10-րդ դ. Տայքի հայերեն լեզվի-բարբառի համար իբրև բնորոշ հատկություն»³:

Այս պատմական փաստերը հիմք են հանդիսանում վկայակոչելու, որ քիֆլիսահայ բարբառի ծնավորումը սկսվել է դեռևս հնագույն ժամանակներից՝ տարբեր շրջանների հայերի հետ ունեցած փոխհարաբերության գործընթացում, ինչպես նաև՝ գրաբարի և վրացերենի ազդեցության հետևանքով:

Հետագայում՝ XII դ. սկզբներին, վրաց արքա Դավիթի հրավերով Անիից Վրաստան են տեղափոխվում հայ գաղթականներ: Իսկ XVIII-XIX դ.դ. Երևանի տարբեր շրջաններից շատ հայեր բնակություն են հաստատում «Հավվաբար» քաղաքում: Նրանք միաձուլվելով տեղացիներին, ընդունում են նրանց աղաթ-ծեսերը, հագուստը, բայց միևնույն ժամանակ պահպանում իրենց Այրարատյան բարբառը, որն էլ նոր գրական հայերենի հետ միասին իրենց ազդեցությունն են թողնում տեղացիների խոսվածքի վրա: Թիֆլիսահայ բարբառը քիչ-քիչ սկսում է անկում ապրել՝ իր տեղը զիջելով գրական հայերենին:

Սակայն, իրենց ստեղծագործություններով թե մեծ դրամատուրգը՝ Գ. Սունդուկյանը, թե երգի արքան՝ Սայաթ-Նովան, անմահացրել են այս հարուստ քիֆլիզեցու հոգուն հարազատ, քաղցր ու գեղեցիկ բարբառը: Ունենք. Թբիլիսիի բարբառի ուսումնասիրությանը նվիրված բժիշկ Գևորգ Հախվերդյանի «Սայաթ-Նովայի» առաջին հրատարակչի ուսումնասիրությունը, որը միաժամանակ նաև հայ բարբառագիտության առաջին գիտական ուսումնասիրությունն է, և Տոմսոնի ուսումնասիրությունը, որը չունի Հախվերդյանի աշխատության ամբողջությունն ու ճշտությունը և կատարված է հնդեվրոպական լեզվաբանության տեսակետով:

Գ. Սունդուկյանի լեզուն ունի բառապաշարային հետևյալ շերտերը՝ ընդհանուր հայերեն բառեր, բարբառային բառեր և փոխառություններ:

Մենք մանրակրկիտ ուսումնասիրել ենք այն բարբառային բառերը, որոնք տեղ են գտել Սունդուկյանի ստեղծագործություններում:

2 Ի Արզուման «10-րդ դ. վրացերեն մի ձեռագրի հայերեն հիշատակագրությունները և նրանց նշանակությունը հայ բարբառագիտության համար», Ե., 1958, էջ 38:

3 Նշվ աշխատությունը էջ 40:

Ըստ հաշվառումների, Սունդուկյանի դրամաներում բարբառային բառերի թիվը հասնում է մոտ 2950⁴, այդ թվում նաև մի շարք բառեր, որոնք թեև անցել են գրական լեզվից և գրաբարից, սակայն, ենթարկվելով հնչյունական և ձևաբանական փոփոխությունների, բարբառային երանգավորում են ստացել:

Դրամատուրգի բառապաշարում զգալի տեղ են զբաղեցնում թիֆլիսահայության բարբառին բնորոշ բառեր, որոնց թիվը հասնում է մինչև 80⁵: Այս բառերը հատուկ են միայն թիֆլիսի բարբառին: Այս բառերից 35-ը ստուգաբանված են Դր. Սմառյանի կողմից, իսկ մնացածը գտնում ենք Գ. Ասատուրի բառարանում:

Բազմակողմանի և հետաքրքիր նյութ են պարունակում Գ. Սունդուկյանի դրամաները: Այստեղ հնչում է ոչ միայն սոսկ թիֆլիսի բարբառը, այլև գրական լեզուն և հայերենի այլ բարբառներ, որոնք պայմանավորված են գործող անձանց տեղայնությամբ:

Դետևաբար, Սունդուկյանի ստեղծագործությունների մեջ բարբառային բառերը կարող ենք բաժանել երկու խմբի.

ա) Բառեր, որոնք գործածական են սոսկ թիֆլիսի բարբառում:

բ) Բառեր, որոնք գործածական են նաև հայերենի այլ բարբառներում:

Թիֆլիսահայ բարբառը ընկած է «ՈՒՄ» և «Կը» ճյուղերի միջև: Այս իրողության մասին է վկայում նաև Ա. Ղարիբյանի «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ: Նա Թիֆլիսիի և Արեշ-Հավարիկի բարբառները համարում է միջճյուղային: Ըստ Ա. Ղարիբյանը՝ առաջինը զուգորդում է ուժ և կը ճյուղերի, երկրորդը՝ ուժ և ս ճյուղերի հատկանիշները⁶:

Սակայն դրամատուրգի ստեղծագործություններում, գրական լեզվի ազդեցության հետևանքով, գերակշռում է «ՈՒՄ» ճյուղը, այսինքն՝ այդ բարբառն իր սահմանական եղանակի ներկան և անցյալի անկատարը կազմում է «ուժ» վերջավորություն ունեցող անկատար դերբայով և օժանդակ բայով. օրինակ՝ «էլ մի ասի, Բարբառե ջան, գլխեմեն ինչուր վուտը սոմսոնում է...» (էջ 333) : «Սնուն էի վուր ջեր նրանք գան» (էջ 395)* :

Սունդուկյանի լեզուն ուսումնասիրելիս, նկատում ենք, որ ներկայի գաղափարը արտահայտելու համար բավական հաճախ գործ է ածվում նաև «կու» մասնիկով ձև, որով Թիֆլիսիի բարբառը նմանվում է «Կը» ճյուղի բարբառներին. օրինակ՝

4 А. Кочоян „Отражение структурных особенностей Тбилисского арм Диалекта в произведениях Г. Сундукяна. Е., 1958, стр. 18.

5 Տե՛ս նշվ. աշխատության, էջ 19 :

6 Գ. Բ. Ջահուկյան «Հայ բարբառագիտության ներածություն», Ե., 1972, էջ 22.

«Էլի ինչոր նուր փողոթաք է վիկալի...Սեկը տասը կու դադե, կոսե, ասում էր հիմնի» (էջ 333): «Սենակ շնուքի բան չէ, Սալոմե ջան. աստուծ ումը կու տա, կու տա, ամա ինձ թե կու հարգնիս, օշովի դովաթն անկումս չէ գալի...» (էջ 333) :

Այդ նշանակում է, թե Թբիլիսիի բարբառի լեզվական մտածողության մեջ այս երկու ձևերը հավասար արժեք ունեն, ինչպես Ա. Ղարիբյանն է նշում իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ. «Ղրանք հավասարազոր հասկացական կատեգորիաներ են Թբիլիսիի բարբառում»⁷:

Զուտ Թիֆլիսի բարբառին հատուկ բառեր հանդիպում են կերպարների խոսքում, որոնք հատուկ երանգավորում են հաղորդում նրանց խոսքին. ինչպես՝ «Էլ հեր ու վուրթութինը գանա վիր ննգավ աշխրթեսն» (էջ 362). «Վուր գլխամե էտու փերումը չէ դիվ, ամա վուր չէ ըլում ջեր, ի՞նչ վայ տամ իս իմ գլուխը» (էջ-23) : Այդ կարգի բառերից են նաև՝ հալբաթա, հիտդ, էկի, էբի, կուլի, էստու, էտու, էնդու, հեստի և այլն: Այս բառերը տարբեր քերականական ձևեր են ներկայացնում: Այս դերանունների հոլովման ժամանակ ի տարբերություն երևանի բարբառին, Թբիլիսիի բարբառը միայն սեռականում և տրականում վերջին հոլովակազմիչը կորցնում է (օրինակ՝ երևանի՝ ըստուր, ընդուր, Թբիլիսիի՝ էստու, էնդու, էտու) և բացառականում ունենում է ումեն վերջավորությունը.

Ուղդ.	էս	էն	էտ
Սեռ.	էստու	էնդու	էտու
Տր.	էստուն	էնդուն	էտուն
Հայց.	էս	էն	էտ
Բաց.	էստումեն	էնդումեն	էտումեն
Գործ.	էստով	էնդով	էտով
Ներգ.	էստուն	էնդուն	էտուն

Գանա-ն (միթե), ինչպես վրացերենում, այնպես և հայերենում եղանակավորիչ բառ է և դասվում է երկբայական եղանակավորիչների շարքին (վրացերենում՝ հարցական (կիթսվիթի) եղանակավորիչների շարքին):

Դիվ-ը իր տարբեր քերականական ձևերով (դիվու, դիվունը, դիվունանը) որոշյալ դերանուն է և նշանակում է բոլոր(ը), իսկ ջեր (անգամ) սպասարկու բառը գործածվելով քանակական թվականների հետ ցույց է տալիս գործողության կատարման քանակը:

Թիֆլիսի բարբառին բնորոշ բառերը հանդես են գալիս ժամանակաշրջանի, և հատկապես միջավայրի գունավորում ստեղծելու նպատակով:

⁷Օրինակները բերված են Գ. Սունդուկյանի «Երկեր»-ից, Երևան, 1984 թ.:

7.Ա. Ղարիբյան «Հայ բարբառագիտություն», Ե., 1947, էջ 107:

դրանք այնպիսի բառեր են, որոնք օժտված են Թիֆլիսի կենցաղին բնորոշ հասկացությունները, առարկաները ճշտորեն, խտացված ձևով ներկայացնելու կարողությամբ. ինչպես՝

«Յիս էն էլ գիդիմ, վուր բազազխանումը շատերուն կարթալ գրիլ իք սովորեցնում ու օչովիմեն մե գրոշ էլ ուստաուլս խիք վի կալնում» (էջ 750) :

Սեծ դրամատուրգը կարողացել է ստեղծել այնպիսի դրություններ ու բախումներ, որոնք ցայտունությամբ դրսևորում են գործող անձների բնավորությունն ու հոգեբանությունը: Իսկ բարբառային բառերի օգնությամբ այն ավելի է ընդգծվում, ոճավորվում, բնորոշ և արտահայտիչ դառնում :

«Չէ՛, չէ՛, յիս չիմովնիկի հիդ բան չիմ բռնի, ախպեր: Յիս հեստի փեսա գուզիմ վուր նա՛ ինձ պատիվ տա, չէ թե յիս նրան. ինձ պես փուղ դադեու ճամփեն գիդենա, ինձ պահե՛նուփոր լավ չի ըլի՞, վուր փողոցի տղա ըլի ու փուղ ունենա, վուր յիս էլ դովութումը գլիզըլուլ գա՛մ» (էջ 7) :

Ընդգծված բառերից բազազխանումը, դովութումը ևս բարբառային քերականական ձևեր են:

Ինչպես գիտենք, «Ում» ճյուղի բարբառների ընդհանուր գծերից մեկը ներգոյական հոլով ունենալն է, որը զուգորդվում է ը և ն որոշիչ հոդերի հետ: Ինչպես՝ «էլ Սաղմուսը, Ասմաուրքը ու դիփ տերտերներու գրիրը, ասում է, փուրումն է» (էջ 19) : «Տի՛ս, թե ի՛նչ խոսկ կու իմանաս քուչումը» (էջ 3), «է՛քուց սաղ բազազխանեն պիտիմ Օրթաճալա ղոմաղ անի բառումը» (էջ 23) :

Կերպարների խոսքը ոճավորելիս Սունդուկյանը նկատի է ունեցել նրանցից յուրաքանչյուրի էությունը, վարքագիծն ու գործունեությունը և դրանցով պայմանավորված մտածելակերպը: Այս առումով ուշագրավ է Պեպոյի խոսքը, որը չնայած բարբառային է, բայց արտահայտիչ է ու ռիթմիկ և, նրանում զգացվում է բողոքի ու ցասման լարվածություն. «Մեկն էլ է չի՞նաց անե աշխրբքին սրա արարմունքը՝ մեկն էլ է հարայի չկանենա տա՞, վուր էս մարթը, վուրին դիփումը գլուխ իմ տալի, դիփումը հարգում ին ու պատվում ին, դիփումը մի՛նձացնում, փա՛ռավորում ու յիրգի՛նք բացրացնում... սա էն մարթն է, վուրի համա վունչինչ բան սուրփ չկա աշխրբքումը... Հիմի լաց ըլեք, ինչոառա գուզիք... Խղճի լացը հալթաք էնդուր է ստեղծի աստուծ, վուր հարուստի արարմունքը լվացվի» (էջ 318) :

Իսկ Արուսիին, Օսկան Պետրովիչի, Կարապետի, Սալոմեի խոսքում զգացվում է շահի և փողատենչության մոլուցքը. «Ամա էս մե բանը կի լավ չէ ըլում, վուր էսդադա փուղիր է մխսիլ տալի ինձ... յիս՝ վուր մե գրոշի հա-

մա հոբիս տալիս իմ...»(էջ 264): «Տո, զարմանք կնիկ է էս իմ կնիկը, երկու հարուր տու, լիռիք հարուր տու, հենց գիղենաս միլիոն ունենամ»(էջ 8):

Ինչպես տեսնում ենք, Թբիլիսիի բարբառին բնորոշ են հնչյունափոխության հետևյալ տարբերակները՝

Բառասկզբում Ե>յի, օրինակ՝ ես-յիս, երկիր- յիրգիր
Բառասկզբում և բառամիջում Ե>ի՝ երեք-յիրիք, տեղ-տիղ
Բառասկզբում և բառամիջում Ե>է՝ երկաթ-երկաթ, երեխա-երեխա
Բառասկզբում Ո>վուր՝ որդի- վուրդի
Բառամիջում Ո>ու՝ փող-փուղ

Կերպարների խոսքում բարբառային տարրերը անհամեմատ ավելի շատ են, քան հեղինակային խոսքում: Կերպարների խոսքը, ասելիքը համեմ-վում է նաև արարատյան բարբառին բնորոշ տարրերով: Այդ կարգի բառերից են՝ են հանգի, էստուց դենը, թավազա անել, թանխա տալ, ինչ հաջաթ, ծիկա տալ, շիանց տալ, ցից ըլել, որոնք հիմնականում հանդես են գալիս հարադրավոր բարդությունների ձևով:

Այստեղ ավելորդ չենք համարում նշել այդ բառերի բացատրությունը. ինչպես՝

էն հանգի նշանակում է՝ են տեսակ
էստուց ունը՝ այսուհետև, սրանից հետո
Թավազա անել՝ հրամցնել, տալ, մատուցել, հյուրասիրել
Թանխա տալ՝ պատմել
Ինչ հաջաթ՝ ինչ փույթ
Ծիկա տալ՝ ճչալ, բղավել, գոռալ
Շիանց տալ՝ նշանց տալ, ցույց տալ
Ցից ըլել՝ ցգվել, տնկվել

Այստեղ ևս կերպարների մտածողությունը, դատողությունները համապա-տասխան լեզվական արտահայտություն են ստանում շնորհիվ առանձին բարբառային բառերի ու բառակապակցությունների գործածության, որոնք ոչ միայն ոճավորում են, այլև պատկերավոր ու արտահայտիչ դարձնում կեր-պարների խոսքը: Նշենք դրանցից մի քանիսը բնագրային օրինակներում՝
«Ի՞նչ հաջաթ, ջիանճվելի վրա ինչո՞վ իս ավել...» (էջ 255): «Համ էլ իմ խեյրաթը ի՞նչ օգուտ քիզ. լավ ի՞նչ կանամ ասի էն հանգը, վուր դուն ինքդ ինձ վրա լավ չըլիս հասկանում» (էջ-823): «Շատ ապրիս, Սիմոն ախչիկ-պարոնին թավազա արա»(էջ-809): «Վահ, ի՞նչ իս տտի ցից էլիլ»(էջ 23):
Հանդիպում ենք նաև Մշո բարբառին բնորոշ լեզվական իրողությունների.

* Բառերի բացատրությունը վերցված է Գ. Գասպարյանի «Բառարան բարբառային բառերիև օտար բառերի»-ից, 1947:

«ԵՆԵՆԳ չժած էկար, վունցոր քիզ կու վայիլեր ու, ես խելուաք էի տեսնում» (էջ 773) :

Կան բառեր էլ, որոնք գործածական են հայերենի մի շարք այլ բարբառներում՝ դուրթ, օմքի (ոք, մարդ, անձ), իստակ, ուստի) և դրանք հետազայում աստիճանաբար անցնում են լեզվի ժողովրդախոսակցական ոլորտ:

Բարբառները, ժողովրդախոսակցական լեզվի տարրերը գեղարվեստական գրականության լեզվի զարգացման ու հարստացման հիմնական միջոցներից են: Եվ պատահական չէ, որ «արծակի լեզուն հիմնականում սնվում, հարստանում և համապատասխան ոճավորում է ստանում բարբառների, ժողովրդախոսակցական լեզվի միջոցներով, որի բառապաշարն ավելի գործուն է, հյութեղ, կենդանի ու կենսունակ, որը և միշտ ու անընդհատ փոփոխության է ենթարկվում»⁸:

Ըստ Ղ. Աղայանի՝ «Գրաբար (բարբառային-նշ. մ.) բառեր գործածելը հեշտ է, բայց մարդ պետք է երաժշտական լսողություն ունենա, որ ըմբռնի որ բառը որտեղ կարող է քաղցր հնչել և որտեղ անախորժ»:

Գ. Սունդուկյանը ուսանելի է նախ և առաջ իր ստեղծագործական արվեստով: Նա կատարելապես տիրապետում էր դրամատուրգիական արվեստի գաղտնիքներին: Իր դրամաները հարստացնելու, գեղեցկացնելու, ոճավորելու և հատուկ երանգավորում հաղորդելու նպատակով, հաճախ մեջբերումներ է անում նաև Սայաթ-Նովայից, որոնց շնորհիվ ավելի համոզիչ ու տիպական է դառնում հեղինակի խոսքը: Նաև չեն վրիպում սունդուկյանական նորակազմությունները, որոնք ժամանակ ցույց տվող՝ էօր, տարի, իրիկուն, գիշեր բառերի և -ութին վերջածանցի միասնությամբ կազմում են՝ էօրութին, իրիգնութին, գիշիրութին, իրիգնահացութին, տարութին վերացական գոյականներ ինչպես՝ «Ասեմ վուր արեգակը առուտեհան դուս է գալի, իռիգնութին մեր է մտնու՞մ» (էջ-435):

«Քի դրուստն ասիմ, յիս էլ մտկումս էտ դրի, վուր ես գիշիրութին մեծրեցի» (էջ-191) :

Զնայած, բազմաթիվ փոխառությունների և օտարաբանությունների, միևնույն է թիֆլիսի բարբառը պահպանում է իր ազգային գունավորումը:

Տեղական բարբառին առաջնություն տալը բխում էր դրամատուրգի այն համոզումից, որ հարկավոր է կյանքն արտացոլել հարազատորեն, տվյալ միջավայրին ու ժողովրդին հասկանալի լեզվով:

8. Լ. Եգեկյան «Ղ. Մաթևոսյանի արծակի խոսքարվեստի մի քանի հարցեր», Ե. 1986, էջ 44: